ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ռուսաստանի Դաշնություն, 2018 թվականի դեկտեմբերի 6-9-ը

4. Հրավիրող կողմը

Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարություն

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն հայ-ռուսական առողջապահական 4-րդ համաժողովին

6. Քննարկված թեմաները

Հայ-ռուսական առողջապահական 4-րդ համաժողովի օրակարգը կազմված էր մի քանի նիստերից, որոնց ընթացքում քննարկվեցին առողջապահության և բժշկագիտության մի շարք կարևոր ոլորտներում մասնագիտական համագործակցության հարցեր՝ ուռուցքաբանություն, էլեկտրոնային առողջապահություն, ուրոլոգիա, վերարտադրողական առողջություն, ծխախոտի դեմ պայքար, առողջ ապրելակերպ և այլն: Նիստերը ղեկավարվում էին հայկական և ռուսական կողմերի մեկական ներկայացուցչի կողմից:

Համաժողովի մասնակիցները ներկայացրել են վերը նշված ոլորտներում իրենց երկրներում իրականացվող քաղաքականությունը, ձեռքբերումները և առկա խնդիրները:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկան ՌԴ առողջապահության նախարար Վ.Սկվորցովան, Կալուգայի նահանգապետ Ա.Արտամանովը, ակադեմիկոս Ա.Կապրինը:

Բացման արարողությանը ելույթիս խոսքում, ողջունելով բոլոր մասնակիցներին, անդրադարձ եմ կատարել առողջապահության բնագավառում հայ-ռուսական համագործակցության ներկայիս վիճակին՝ կարևորելով վերջինիս դինամիկ զարգացումը, ներկայիս մարտահրավերիներին համահունչ միասնական գործողություններ իրականացնելու անհրաժեշտությունը, առողջապահության և բժշկագիտության առանձին ոլորտներում փոխշահավետ համագործակցությունը:

Համաժողովի շրջանակում հնչեցին թեմատիկ ելույթներ վեց ուղղություններով՝ ուռուցքաբանություն, էլեկտրոնային առողջապահություն, բժշկական տուրիզմի զարգացում, առողջ ապրելակերպ, ծխելու դեմ պայքար, ուրոլոգիա:

Հայ-ռուսական 4-րդ առողջապահական համաժողովի շրջանակներում առանձնազրույց եմ ունեցել ՌԴ առողջապահության նախարար Վ.Սկվորցովայի հետ: Քննարկվել են լայն համագործակցության ներկայիս քայլերի ընթացքը, ինչպես նաև տուբերկուլոզով հիվանդների բուժման ոլորտում նոր համագործակցության հնարավորությունները:

Համաժողովի նախօրեին Մոսկվայում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը կայացել է հանդիպում ռուսաստանաբնակ ու, հատկապես, մոսկվայաբնակ հայտնի հայազգի բուժաշխատողների, առողջապահության ոլորտի գործիչների հետ: Հանդիպման նպատակն էր համախմբել և ուղղորդել Ռուսաստանում բնակվող ու գործող մարդկային, մասնագիտական հսկայական ներուժը, որը կարող է իր մեծ նպաստը բերել Հայաստանի առողջապահության համակարգի զարգացման գործին:

Հայ համայնքը խոստացավ ավելի ակտիվորեն ներգրավվել ՀՀ առողջապահության ոլորտի զարգացման ծրագրերին, մասնակցել մյուս տարի Երևանում կայանալիք Հայկական բժշկական միջազգային համագումարի աշխատանքին:

Դեկտեմբերի 9-ին ՌԴ Դուբնա քաղաքում մեր աշխարհահռչակ հայրենակցի՝ Մենդելեևի աղյուսակում իր անունը նոր տարրով հավերժացրած ֆիզիկոս Յուրի

Հովհաննիսյանի աջակցությամբ կայացած հանդիպումների ժամանակ ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ Հայաստանի հետ համագործակցության գործնական հնարավորություններ ստեղծելու ճառագայթային ախտորոշման ու բուժման ասպարեզում:

Նույն օրը Մոսկվայում հանդիպել եմ նաև հայազգի երիտասարդ բժիշկների հետ:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի ավարտին ստորագրվել է Համատեղ հայտարարություն:

Միաժամանակ, ռուսական ՄԻԲՍ ընկերության և ՀՀ առողջապահության նախարարության միջև ստորագրվեց Փոխըմբռնման Հուշագիր, որով կողմերը կհամագործակցեն ուռուցքային հիվանդություններով տառապող հիվանդների ճառագայթային բուժման ոլորտում:

9. Առաջարկությունները

Առաջարկվեց հաջորդ՝ 5-րդ հայ-ռուսական առողջապահական համաժողովը կազմակերպել Հայաստանում, 2019 թվականի աշնանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Invalid signature

X

VERIFIED OCSP 12.12.2018 11:38:23 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

11.12.2018 թ.